ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 3-Ա

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, ինչպես նաև ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել օրակարգը հետևյալ քննարկվող հարցերով
1.Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 14-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող խորքային հորն իր զբաղեցրած հողատարածքով անհատույց օգտագործման իրավունքով «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերությանը հանձնելու մասին:
3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին:
4. Արարատ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի սահմանամերձ Պարույր Սևակ և Երասխ բնակավայրերի ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ գույքի հարկի ցուցակները հաստատելու և գումարները փոխհատուցելու մասին:
6.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024թ.-ի բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի և համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության կամ կառուցապատման մրցույթների կազմակերպման և անցկացման աշխատանքային կանոնակարգը հաստատելու մասին:
8.Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Մ.Խորենացու 37 հասցեում գտնվող 1.25257 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը նպատակային կառուցապատման հասմունքով մոցութային կարգով տրամադրելու մասին:

մարզադահլիճի կառուցման նախագծման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ

ՁԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ

ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 4-Ա

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՇԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐՆ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐՏԱՇԱՏ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող, Ավշար բնակավայրի N 0004 ծածկագիրը կրող խորքային հորն իր զբաղեցրած՝ Ավշար բնակավայրում գտնվող 03-013-0418-0017 կադաստրային ծածկագիրը կրող 0.005 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքով անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ հանձնել «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերությանը՝ խորքային հորի պատշաճ շահագործման և պահպանման ապահովման նպատակով:
2.Համայնքի ղեկավարին՝ «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերության հետ կնքել անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ
ՋԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն և 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումները՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող խոտհարքների և արոտավայրերի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերը՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման, կնքվում են պարզ գրավոր ձևով, մինչև 3 տարի ժամկետով:
3.Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու տրամադրումը իրականացնել սույն որոշմամբ սահմանված կարգով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ
ՁԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՂԱՉԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

Հավելված
Հաստատված է համայնքի ավագանու
14.02.2024թ. N 5-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման, արդյունավետ օգտագործման պայմանները:
2. Սույն կարգի նպատակները, խնդիրները՝
   1) Արարատ համայնքի արոտավայրերի, խոտհարքների կայուն պահպանության ու արդյունավետ օգտագործման գործընթացների նպաստմանը.
   2) Մակերեսային բարելավման նպաստավոր պայմանների ստեղծումը.
   3) Որակական բնութագրերի, բնապահպանական վիճակի վատթարացման կանխումը.
   4) Սանիտարական վիճակում պահպանության նպաստումը:
3. Մինչ արոտավայրերի օգտագործումը կազմել օգտագործման պլան՝ հաշվի առնելով գյուղատնտեսական կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բուսածածկը:
4. Արոտավայրերի կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով կիրառվում է արոտավայրերի հերթափոխային արածեցում՝ հետևյալ սկզբունքներով՝
   1) մինչ արոտային շրջանի սկսվելն ընդհանուր արոտավայրը բաժանվում է առանձին արոտամասերի (արոտաբաժինների), որոնք արածեցվում են որոշակի հերթականությամբ.
   2) յուրաքանչյուր տարի արածեցման հերթականությունը փոփոխվում է.
   3) նախորդ տարվա վերջում արածեցված արոտամասը հաջորդ տարում չի արածեցվում, թողնվում է «հանգստի»:
5. Յուրաքանչյուր տարի սահմանվում է արոտային շրջանի սկիզբը և ավարտը՝ հիմք ընդունելով տվյալ տարվա կլիմայական պայմանները:
6. Արոտային շրջանի տևողությունը Արարատ համայնքում կազմում է՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 210-240 օր, մանր եղջերավոր կենդանիների համար՝ 270-300 օր, իսկ բարձր լեռնային գոտիներում համապատասխանաբար՝ 150-170 օր և 180-210 օր:
7. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է՝
   1) կիսաանապատային գոտիներում՝ 2-3 անգամ.
   2) տափաստանային գոտիներում՝ 3-4 անգամ.
   3) մարգագետնատափաստանային գոտիներում՝ 4-5 անգամ.
8. Գյուղատնտեսական կենդանիների արածեցումն սկսվում է գարնանը, բույսերի վերաճն սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, բույսերի բարձրությունը հողի մակերեսից կազմում է՝
   1) կիսաանապատային գոտիներում՝ 6-8սմ
   2) տափաստանային գոտիներում՝ 10-12սմ.
   3) մարգագետնատափաստանային գոտիներում՝ 12-15 սմ-ի.

9. Մեծ թեքություններում (15⁰ և բարձր), որտեղ առկա է հողատարման (էրոզիա) վտանգ և բուսածածկը համեմատաբար թույլ է, արածեցումը կատարվում է սահմանված ժամկետից 10-12 օր անց:
10. Գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար հատկացվող արոտատարածքի մակերեսը սահմանվում է՝ ելնելով արոտային թույլատրելի բեռնվածությունից:
11. Արոտային թույլատրելի բեռնվածությունն արտահայտվում է մեկ հեկտարի վրա տեղաբաշխվող պայմանական անասնագլխաքանակով:
12. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակի տարբեր գյուղատնտեսական կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝
    1) Կով, արտադրող ցուլ՝ 1.0
    2) Խոշորեղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0.66
    3) Մանր եղջերավոր կենդանի՝ 0.1
13. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատարածքը կազմում է՝
    1) կիսաանապատային գոտում՝ 6-7 հա.
    2) տափաստանային գոտում՝ 2-2.5 հա
    3) մարգագետնատափաստանային գոտում՝ 1.5-1.7 հա.
14. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային (համակարգված) արածեցումն է, որի կիրառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝
    1) կիսաանապատային արոտավայրերում՝ 40-60 հա.
    2) տափաստանային արոտավայրերում՝ 20-40 հա
    3) մարգագետնատափաստանային արոտավայրերում՝ 20-30 հա.
15. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը բաժանվում է հետևյալ թվով արոտավանդակների՝
    1) կիսաանապատային գոտում՝ 20-40.
    2) տափաստանային գոտում՝ 16-20.
    3) մարգագետնատափաստանային գոտում՝ 12-16.
16. Արոտավանդակներն առաջինից մինչև վերջինը, ըստ տեղադրվածության, արածեցվում են սահմանված հերթականությամբ՝ մինչև բոլոր արոտավանդակների արածեցման ավարտը, որից հետո կենդանիները դարձյալ փոխադրվում են առաջին արոտավանդակ և սկսվում է արածեցման հաջորդ բոլորապտույտը՝ ըստ հերթականության:
17. Արածեցված արոտավայրերում բույսերի կայուն վերաճ ապահովելու նպատակով արածեցման երկրորդ բոլորապտույտը պետք է սկսել առաջին բոլորապտույտի ավարտից 20-25 օր հետո, հաջորդ բոլորապտույտները՝ 35-40 օր անց, իսկ արոտավանդակներում արածեցման տևողությունը պետք է կազմի առաջին բոլորապտույտում՝ 2-3 օր, հաջորդ բոլորապտույտներում՝ 3-5 օրից ոչ ավելի:
18. Արոտավայրերում կենդանիների մակատեղերը (գիշերավայրը) պետք է կառուցել՝ ջրելատեղերից 300-500 մ հեռավորության վրա:
19. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝
    1) կթու կովերի համար՝ 1-1.5 կմ-ից ոչ ավելի.
    2) բտվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1.5-2.5 կմ-ից ոչ ավելի:
20. Արոտավանդակների սահմանազատման նպատակով, որպես բնական սահմաններ, կարող են ծառայել արոտատարածքում առկա ձորակները, գետակները, հեղեղատները, թեքությունները, բացատները, թփուտները, ճանապարհները, իսկ դրանց բացակայության

դեպքում անհրաժեշտ է օգտագործել շարժական ցանկապատեր, որոնցից առավել արդյունավետ են էլեկտրացանկապատերը:

21. Բնական խոտհարքներն տրամադրվում և օգտագործման են խոտհնձի նպատակով: Խոտհնձի լավագույն ժամկետ է սահմանվում բուսածածկում գերակշռող արժեքավոր հացազգի (դաշտավլուկազգի) խոտաբույսերի հասկակալումից մինչև ծաղկման, իսկ թիթեռնածաղկավոր (բակլազգի) խոտաբույսերի դեպքում՝ կոկոնակալումից մինչև ծաղկման փուլն ընկած ժամանակաշրջանը:
22. Բնական խոտհարքներում խոտհունձն իրականացվում է 7-10 օրվա ընթացքում, երբ խոտի բարձրությունը հողի մակերեսից կազմում է 40-60 սմ:
23. Բնական խոտհարքներում յուրաքանչյուր երրորդ տարում խոտհունձն իրականացվում է խոտհնձի սեզոնի վերջում՝ բույսերին սերմնակալման և բնական վերարտադրության հնարավորություն ընձեռելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 6-Ա

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 82.1--րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արարատ համայնքի հնգամյա /2022-2026/ զարգացման ծրագիրը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Արարատ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ
ՋԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ
ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 7-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.08.2015-ի թիվ 956-Ն,18.12.2014թ.-ի թիվ 1444-Ն որոշումները, առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրում ֆիզիկական անձանց 2024թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Հաստատել Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրում իրավաբանական անձանց 2024թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Հաստատել Երասխ բնակավայրում ֆիզիկական անձանց 2024թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 3-ի:
4.Հաստատել Երասխ բնակավայրում իրավաբանական անձանց 2024թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 4-ի:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ
ԶԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 8-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 225-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 1,2,3 հավելվածների:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ
ՁԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ
ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

Արարատի համայնքի ավագանու
2024 թվականի հունվարի 24-ի
N 8-Ն որոշման

Հավելված N 1

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 225 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հազ. Դրամ

Տողի N	Եկամուտների անվանումները	հոդված	Տարեկան	Փոփոխ. + / -	Տարի
1360	Կապիտալ պաշտոնական դրամաշնորհներ	7332	303857.644	+66300.0	370157,644

Արարատ համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 14 -ի
N 8 -Ն որոշման

Հավելված N 2

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի
N 225 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հազ.Դրամ

Բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տարեկան	Փոփոխ. + / -	տարի
04	3	2	Գազաֆիկացում	117580.1	+3000.0	120580.1
06	6	1	Բազմաբնակարան շենքերի տանիքների վերակառուցում	483609.4	+8000.0	491609.4
09	5	1	Արատադպրոցական դաստիարակություն	216292.0	+112800.0	262792.0
06	6	1	Ջրահեռացում	491609.4	+20000.0	511609.4
06	4	1	Փողոցների լուսավորություն	163839.0	+1000.0	164839.0
06	3	1	Ջրամատակարարում	150049.5	+13000.0	163049.5
06	6	1	Բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում	511609.4	+7000.0	518609.4
04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	185962.6	+143098.441	329061.041

Արարատ համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 14-ի
N 8-Ն որոշման

Հավելված N 3

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 225 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 3 -ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հազ. Դրամ

Տողի N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդվածի	Տարեկան	Փոփոխ. + / -	Տարի
5112	Շենքերի և շինությունների կառուցում	5112	327442.5	106300.0	367442.5
5113	Շենքերի և շինությունների կառուցում	5113	400238.1	168598.441	568836.541
5134	Նախագծահետազոտական ծախսեր	5134	800.0	+33000.0	33800.0

Արարատ համայնքի ավագանու
2024 թվականի հունվարի 14-ի
N 8-Ն որոշման

Հավելված N 4

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի
N 225 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 4 -ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տողի N	Եկամուտների անվանումը	Ընդամենը (u.4+u.5)	այդ թվում	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ (դրական նշանով) ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ (բացասական նշանով)*	241598.441	241572.955	25.486

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի դրույթներով, առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի և համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության և կառուցապատման մրցույթների կազմակերպման և անցկացման աշխատանքային կանոնակարգը:
2.Արարատ համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 216-Ա որոշումը ճանաչել անվավեր:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ
ԶԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

Հաստատված է՝
Արարատ համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 14-ի N 9-Ա որոշմամբ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի և համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման կարգը:

2.Արարատ համայնքի և համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման մրցույթի կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և գույքն վարձակալության կամ կառուցապատման տրամադրման աշխատանքների կազմակերպումն իրականացվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, ՀՀ Հողային օրենսգրքին, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման և սույն կանոնակարգին համապատասխան;**Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով՝ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-80-րդ հոդվածներով սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:**

3. Հողամասի վարձակալության իրավունքը վարձակալության պայմանագրի պայմաններով վճարի դիմաց հողամասի ժամկետային օգտագործման իրավունքն է: Հողամասերը մրցույթներով տրամադրելու համար վարձավճարի (վճարի) մեկնարկային չափը սահմանվում է Արարատ համայնքի ավագանու կողմից, որը չպետք է պակաս լինի տվյալ հողամասի համար սահմանված հողի հարկի տարեկան դրույքաչափից:

4. Պետության և համայնքի հողերից հողամասերի վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով:

Սակարկություններին չեն կարող մասնակցել սակարկությունների կազմակերպիչը, իրավաբանական անձ համարվող կազմակերպչի հիմնադիրները (մասնակիցները), կազմակերպչի աշխատակիցները:

Սակարկություններին չեն կարող մասնակցել մրցութավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև մրցութավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամները:

5.Մրցույթները անցկացվում են Արարատ համայնքի ավագանու որոշմամբ ստեղծված՝ Արարատ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի և համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի հրապարակային սակարկությունների՝ մրցույթների կազմակերպման և անցկացման առնվազն 7 անդամից բաղկացած հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ղեկավարի տեղակալներ, համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներ և ավագանու 1 անդամ:

6.Մրցութային հանձնաժողովի կազմից համայնքի ավագանու որոշմամբ նշանակվում է աճուրդավար և արձանագրող: Մրցութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:Արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի անդամների, մրցույթում հաղթողի, ցանկության դեպքում՝ նաև մրցույթի մասնակիցների կողմից: Մրցույթի հաղթողին որոշելիս՝ առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք: Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի (վճարի) չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները:Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից մեկը՝ հանձնաժողովի որոշմամբ:

6.Մրցույթի մասին հայտարարության (հրապարակային ծանուցման) տեքստը հաստատում է մրցույթի կազմակերպիչը:

7. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) հայտ՝ նշելով հողամասի ձեռքբերման նպատակը

բ) մրցույթին մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր.

գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացնում են սահմանված ձևի հայտ և հանձնում մրցութավարին:

8.Հայտ լրացրած անձի տվյալները նույն օրը մրցույթի արձանագրողը գրանցում է մասնակիցների գրանցամատյանում (կցվում է՝ Ձև N 1) և տրամադրում է մասնակցի վկայական (կցվում է՝ Ձև N 2):

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

9.Մրցույթի կազմակերպիչը մրցույթի անցկացման մասին կատարում է հրապարակային ծանուցում զանգվածային լրատվության միջոցով և էլեկտրոնային հարթակում այդ թվում՝ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ մրցույթն սկսվելուց առնվազն 30 օր առաջ:

10. Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը).

2) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).

3) մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ըստ օրերի.

4) մրցույթի ձևը և անցկացնելու կարգը.

5) մրցույթի լոտի նկարագրությունը (անվանումը), մրցույթի պայմանները.

6) մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

7) մրցույթում հաղթողին որոշելու կարգը.

8) մրցույթին մասնակցելու նախավճարի չափը, ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները.

9) մրցույթում ծածկագրեր կիրառելու կարգը.

10) մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը.

11) մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը:

Մրցույթի կանոնակարգը տրամադրելու համար կազմակերպիչը կարող է պահանջել միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը:

11. Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի հայտերի բացումից առնվազն 30 րոպե առաջ եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

12.Մրցույթի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

13.Մրցույթի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք մրցույթի անցկացման ծանուցման մեջ նշված չափով, ժամկետներում և կարգով մուծում են նախավճար՝ մրցույթում ներկայացված հողամասի մեկնարկային վարձավճարի գնի 5 տոկոսի չափով և ստանում մասնակցի վկայական:

14.Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

15.Մրցույթի կազմակերպիչը հրապարակային ծանուցման պահից սկսած՝ մինչև մրցույթի բացմանը նախորդող աշխատանքային օրը մասնակիցներին ընձեռում է հնարավորություն՝ լոտ(եր)ն ուսումնասիրելու համար դիմել համայնքապետարան յուրաքանչյուր երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00 ընկած ժամանակահատվածում:

16.Մրցույթի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

17.Մրցույթին մասնակցել ցանկացողները սույն կանոնակարգին և մրցույթի մասին հրապարակային ծանուցումներին կարող են ծանոթանալ Արարատի համայնքապետարանի araratcyti.am կայքէջում, ինչպես նաև ք. Արարատ, Շահումյան 34 հասցեում գտնվող Արարատի համայնքապետարանի վարչական շենքում:

18.Մրցույթի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր: Մրցույթին կարող են ներկա գտնվել մրցույթի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը (այսուհետ՝ մասնակից չհամարվող անձինք):

19.Մուտքի վճարի չափը սահմանված է 5000 ՀՀ դրամ: Մրցույթի կազմակերպման փաստաթղթերի նախագծերի տրամադրումը վճարովի է:

20.Մրցույթի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել մրցույթի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.

1) չհայտնել իրենց դժգոհությունը, սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի,մրցութային հանձնաժողովի կամ մրցութավարի գործողությունների նկատմամբ

2) չխոսել մրցույթի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել մրցութային հանձնաժողովին մրցույթը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ մրցույթի ընթացքում միայն մրցութավարի թույլտվությամբ

4) մրցույթի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ,

5) չթաքցնել օրենքով սահմանված՝ մրցութավարի կամ նրա ամուսնու/կնոջ/ ազգական լինելու հանգամանքը:

ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

21.Մրցույթները անց են կացվում դասական (վարձավճարի գնի ավելացման) եղանակով:

22. Մրցույթը սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկ կամ ավելի է:

23.Մրցույթի դրված հողամասի քայլի չափը հաշվարկվում է վարձավճարի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և սակարկողը կարող է գինն ավելացնել քայլի չափից ոչ պակաս գումարով:

24.Եթե մասնակիցն մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վարձավճարի գնի մեջ:

25. Մրցույթն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է:

26.Մրցույթի մասնակիցը բարձրացնում է իրեն տրված մասնակցի վկայականը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված վարձավճարով լոտը վարձակալելու մասին:

27.Յուրաքանչյուր մասնակից կարող է վարձավճարի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով՝ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականը:

28. Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:

29. Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին:

30.Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուդավարը վիճակահանությամբ որոշում է մրցույթում հաղթող համարված մասնակցին:

31.Մրցույթի արդյունքներն արձանագրվում են արձանագրողի կողմից,որի մեջ նշվում են՝

1) մրցույթի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը.

2) լոտի անվանումը, լոտի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ.

3) վարձավճարի մեկնարկային գինը.

4) մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

5) հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

6) վարձավճարի առավելագույն գինը:

33 Արձանագրությունն ստորագրում են մրցութային հանձնաժողովի անդամները, մրցույթում հաղթող ճանաչված անձը, ցանկության դեպքում՝ աճուրդի մյուս մասնակիցները:

34. Եթե մրցույթի հաղթող ճանաչված անձը արձանագրության վերաբերյալ առարկություններ է ունենում, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

35. Մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի պաշտոնատար անձի և մրցույթում հաղթած անձի միջև կնքվում է հողի վարձակալության և (կամ) կառուցապատման պայմանագիր:

36. Վարձակալության և (կամ) կառուցապատման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

37. Մրցույթների արդյունքների հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

38.Մրցույթի կազմակերպիչը նախավճարը՝ մրցույթի կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է մրցույթում չհաղթած մասնակիցներին, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

ՉԿԱՅԱՑԱԾ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

39. Մրցութային հանձնաժողովը չկայացած է համարում մրցույթը, եթե՝

1) ոչ մի հայտ չի ներկայացվել.

2) ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին, ինչպես նաև եթե հայտեր ներկայացնելը չի համապատասխանել սույն օրենքի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.

3) արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը:

40. Մրցույթն անվավեր ճանաչելը հանգեցնում է մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրի անվավերությանը:

41.Յուրաքանչյուր հաջորդ մրցույթ կազմակերպվում և անցկացվում է ՀՀ օրենսդրության և սույն կանոնակարգով սահմանված կարգով:

ՄՐՑՈՒՅԹԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

47. Մրցույթի բացմանը նախորդող երեք օրվա ընթացքում մրցույթից հրաժարվելու դեպքում մրցույթի կազմակերպիչը պարտավոր է հատուցել մասնակիցների կրած իրական վնասը:

48. Մրցույթից հրաժարվելու մասին ծանուցումը պետք է արվի այնպես, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 փետրվարի 2024 թվականի N 10-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 46 ՀԱՍՑԵՈՒՄ ՓԱԿ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 9-ին Արարատ համայնքում տեղի ունեցած «Փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման» նախագծի վերաբերյալ հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը,Արարատ համայնքի ավագանին որոշում է.

Տալ նախնական համաձայնություն Արարատ համայնքի Շահումյան փողոց 46 հասցեում փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման նախագծման աշխատանքներին :

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ
ՋԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ
ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2024 թվականի N 11-Ա

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՇԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ 37 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1.25257 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով,Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48[1] հոդվածի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի պահանջներով,հաշվի առնելով,որ նշված տարածքը գտնվում է Հայաստանին Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում ,ինչպես նաև առաջնորդվելով համայնքի ավագանու կանոնակարգով,***Արարատ համայքի ավագանին որոշում է՝***

1.Թույլատրել համայնքի ղեկավարին նպատակային օգտագործման,կառուցապատման իրավունքով 25/քսանհինգ/տարի ժամկետով տրամադրել Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Մ.Խորենացի 37 հասցեում գտնվող 03-013-0032-0001 կադաստրային ծածկագիրը կրող 1.25257 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը:
2.Նշված տարածքի համար կառուցապատման իրավունքի վճարի մեկնարկային գին սահմանել 250000 ՀՀ դրամ ,նախավճար սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով, մասնակցության վճար՝5000 ՀՀ դրամ,մրցութային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3.Հողամասը կառուցապատման տրամադրել նպատակային, միայն որպես ֆուտբոլային մարզադաշտ օգտագործելու, համայնքում երեխաների և ֆուտբոլիստների սպորտային դաստիարակությանը նպաստելու նպատակով, հետևյալ պայմաններով՝

- կառուցել խաղադաշտ,հանդերձարաններ, սանհանգույց և տրիբունա,
- տեղադրել ջրային համակարգ,

4.Սույն որոշմամբ սահմանված պահանջները 5 տարվա ընթացքում չիրականացնելու դեպքում կառուցապատողի հետ լուծել կնքվելիք պայմանագիրը:
5.Կառուցապատման ժամկետի ավարտից հետո կամ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում կառուցապատողի կատարած անբաժանելի բարելավումները չեն հատուցվում:
6.Համայնքի ղեկավարին՝մրցույթի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի և գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԼԱՆ

ԶԱՔԱՐՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ

ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՈՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԻՄԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՐԳՈ

ՍԻՆԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

14 փետրվարի 2024 թ.
ք. Արարատ